

# Ճ ոճանակային քաղաքականությունը համավարակի և դրա տնտեսական հետևանքների հաղթահարման գործընթացում

## Համառոտագիր



Մարդկային  
գարգացման  
միջազգային  
կենտրոն

### Բա որ ճ ոճանակը կոտրվի՞

Համավարակի առողջապահական և տնտեսական ասպեկտների միջև ակնհայտորեն կա երկվություն: Կառավարության քայլերն ու հանրությանն ուղղվող ուղերձներն էլ, ըստ այդմ, կարող են երկակի լինել: Սկզբնական շրջանում ուղերձը հստակ էր. «Միասին հաղթահարում ենք կորոնավիրուսը, հետո անցնում տնտեսությունը հետ բերելուն»: Կարանտինը Հայաստանում ցանկալի արդյունք չտվեց: Առանց լուծելու առաջին խնդիրը, հիմա անցել ենք տնտեսական հետևանքների մեղմման առաջնահերթությանը: Ներկա պահին հստակ ուղերձ էլ չկա, ու, ըստ էության, տնտեսության և առողջապահության միջև առկա դիլեման լուծելու պարտականությունը դրված է յուրաքանչյուր անձի ուսերին: Մինչդեռ նման ընտրությունը շարքային քաղաքացու համար խիստ ծանր կարող է լինել, ինչի արդյունքում վերջինս կարող է լինել կամ մասնակիորեն արհամարհել խնդիրներից մեկը: Ներկա փուլում արհամարպում է կորոնավիրուսը՝ իր պոտենցիալ վտանգներով, ապագայում՝ համավարակի ավելի մեծ չափերով տարածման դեպքում, մարդիկ կսկսեն արհամարհել տնտեսությունը: Այս առումով երկու ոլորտներում էլ անհաջողություն գրանցելու մեծ ռիսկի առաջ ենք կանգնած:

### Փրկության բանալին՝ համախմբված հասարակություն

Ամերիկյան՝ Վարակիչ հիվանդությունների հետազոտման և քաղաքականության կենտրոնի կողմից հրապարակված վերջին զեկույցն առանձնացնում է երեք սցենար, որոնցով գալիք ամիսների ընթացքում կարող է ընթանալ նոր կորոնավիրուսի տարածումը: Ըստ կենտրոնի փորձագետների՝ համաճարակը կարող է ձգվել մինչև 2022 թվական: Նրանք նաև կարծում են, որ նոր կորոնավիրուսի համաճարակը կանգ չի առնի, քանի դեռ ողջ մարդկության 60-ից 70%-ն այս վիրուսի նկատմամբ ձեռք չի բերել իմունիտետ, իսկ դա կարող է տևել 18-ից 24 ամիս: Առաջ քաշված երեք սցենարներից վատագույնը ենթադրում է համաճարակի երկրորդ՝ ավելի մեծ ալիք այս աշնանն ու ձմռանը: Չեկույցի հեղինակները հենց այս տարբերակն են առավել հավանական համարում և կոչ են անում երկրներիս պատրաստվել դրան:

Համարվում է, որ կորոնավիրուսի դեմ պայքարի էֆեկտիվությամբ աշխարհի առաջատարներից մեկը Հարավային Կորեան է: Այս երկրի իշխանությունը ոչ մի արտառոց բան չի արել, ընդամենը կազմակերպչական հմտությունները համադրել է տեխնոլոգիական առջընթացի հետ ու իր հասարակության հետ ազնիվ երկխոսության մեջ է՝ դառնալով մեկ կուռ միասնություն: Հարավային Կորեայում զանգվածային թեստավորմանը զուգահեռ իշխանությունները ներդրել են վիրուսի հետքի բացահայտման էֆեկտիվ մեխանիզմ. յուրաքանչյուր նոր դեպքի կապակցությամբ նրանք հաղորդագրությամբ իրազեկում են տվյալ դեպքի արեալում եղած համաքաղաքացիներին, հորդորում են դադարեցնել տեղաշարժն ու համատեղ ուժերով լոկալիզացնում են դեպքը: Հայաստանում իրավիճակը միանգամայն հակառակն է. մեզ մոտ տեղաշարժը թույլատրված էր, իսկ քաղաքացիներն իրենց տարածքում դեպքերի առկայության կամ բացակայության մասին տեղեկություն ստանալու համար ստիպված են ապավինել սոցիալական կապերին ու ցանցերին, շուկաներին ու բուժօգնություններից եղած արտահոսքերին: Սրան պետք է հավելել հասարակության բացարձակ ոչ միասնականությունը, անգամ համաճարակի հարցում: Մինչդեռ աշխարհում եղած օրինակները վկայում են, որ անկախ վարչակարգից՝ ժողովրդավարական, թե ավտորիտար, Գերմանիայից մինչև Իրան, Շվեյցարիայից մինչև Վիետնամ, վարակի դեմ կարողանում են արդյունավետ պայքար մղել այն պետությունները, որոնցում հասարակությունը համախմբված է:



Երևան 0001  
Սայաթ Նովա 19  
Հեռ.՝ +374 10 582638  
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org  
www.ichd.org

## **Քառս՝ հանրային վարքագծում ու հանրությանն ուղղվող ուղերձներում**

Համավարակն աղետ է, սակայն մյուս աղետների համեմատ հանգեցնում է տարբերվող հանրային վարքագծի: Օրինակ՝ պատերազմի ժամանակ մարդիկ ավելի լավ են մոբիլիզացվում. մնում են տանը գնդակից կամ ռմբակոծությունից պաշտպանվելու համար: Համավարակի դեպքում վտանգն այդքան ակնհայտ չէ, աչքով տեսանելի չէ, ինչի պատճառով էլ հանրային մոբիլիզացիան առավել խնդրահարույց է: Մարդ ոչ թե պաշտպանվում է գնդակից, այլ հենց ինքն է հանդիսանում այն գնդակը, որ դուրս է գալիս տնից և «խոցում» այլ մարդկանց:

Ուրեմն համավարակը գիտակից միայնակի համար հաղթահարելու երևույթ չէ, այն կարելի է հաղթահարել միայն համընդհանուր կեցվածքով: Կրկնենք՝ համավարակը, ինչպես նաև դրա տնտեսական հետևանքները հաղթահարելու գործում կարևորագույն նշանակություն ունի հանրային վարքագիծը, այն, թե ինչպես են մարդիկ իրենց դրսևորում թե՛ որպես սոցիալապես պատասխատանու, թե՛ որպես տնտեսական միավոր:

Հայաստանում դեպի հանրություն գնացող ռազմավարական ուղերձը հստակ չէ և հակասական է: Արդյունքում մարդկանց ընկալումը հետևյալն է՝ «կորոնավիրուս չկա, թողեք աշխատենք», և քանի որ պաշտոնական աղբյուրների կողմից տրամադրվող տեղեկատվությունը հստակ չէ, մարդիկ իրենց պատկերացումներն ու ընկալումները սնում են այլ, երբեմն իրականությունից խիստ կտրված տեղեկություններով: Մեծ Բրիտանիայում լրատվամիջոցներն անհատական պատմությունների միջոցով ցույց են տալիս կորոնավիրուսի ողբերգական հետևանքները: Հայաստանում փորձում ենք սփոփել մարդկանց, հնարավոր ամեն բան անել, որ մարդիկ չվախենան և խուճապի չմատնվեն. նման մոտեցումն էլ հանգեցրեց նրան, որ մարդիկ սկսեցին լուրջ չվերաբերվել կորոնավիրուսի վտանգներին

Հանրության հետ պետք է խոսել առանց մանիպուլյացիաների, առանց ավելորդ գունազարդման կամ անհիմն հանգստացման, խոսել ազնիվ ու անընդհատ: Դեպի հանրություն եկող ազդակները լավը չեն, չկա խնդիրների միասնական ընկալում, մարդիկ սկսել են ամեն ինչ մերժել ու չհավատալ: Մա է իրական մարտահրավերը, որն ունենք այսօր համավարակի դեմ պայքարում: Հանրության վարքագծի վրա ազդեցություն գործելու տեսանկյունից խիստ կարևոր է նաև, որ կառավարության անդամներն ու քաղաքական գործիչներն անձամբ իրենց հրապարակային գործունեության ընթացքում ցուցադրեն քարոզվող ցանկալի վարքագիծը, օրինակ՝ կրեն դիմակներ և պահպանեն սոցիալական հեռավորությունը: Ընդ որում, դիմակները պետք է լինեն այնպիսին, ինչպիսին հասանելի և մատչելի են նաև քաղաքացիների համար: Մինչ օրս այս տեսանկյունից մենք ունենք խիստ հակասական պատկեր:

Համաճարակին արձագանքելիս կառավարությունները հաճախ են նայում այլ երկրների փորձին, վերջիններիս կիրառած գործիքներին, մինչդեռ այս կամ այն մեթոդի հաջողությունը մեծապես կախված է տվյալ մշակույթից, տվյալ հանրության վարքագծից և դավանած արժեքներից: Նախևառաջ անհրաժեշտ է հասկանալ, թե որ արժեքների վրա կարելի է հիմնվել, որ ուղերձները և գործիքները կարող են լինել նպատակային և հասցեական տվյալ պայմաններում: Լիտվայի դեպքում կարող է արդյունավետ լինել վաուչերների կիրառման գործիքը, ԱՄՆ-ի դեպքում՝ բուժաշխատողների անհատական պատմությունները ներկայացնելը, իսկ Հայաստանի դեպքում՝ գուցե լրիվ այլ ուղերձներ և գործիքներ: Պետք է փնտրել ու գտնել այն գործիքները, որոնք առավել ընկալելի կարող են լինել Հայաստանի հանրության դեպքում և ավելի քիչ դիմել այլոց քայլերի պարզ կրկնօրինակմանը:

*Համառոտագիրը մշակվել է 2020թ. մայիսի 11-ին կայացած՝ «Տնտեսություն և առողջապահություն. հանրային վարքագիծը համանախարակի և նգնաժամի հաղթահարման գործում» խորագրով առանց հղումների իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կրթ սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:*

*Համառոտագրում արտահայտված են ՄՁՄԿ-ի կարծիքները, որոնք պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի շարժացման ծրագրի տեսակետներին:*

